



# ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ



ՀԻՄՆԱԿՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Թիվ 10(25), 22 դեկտեմբերի, 2019թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԵՏԻ ԱՍԱՆՈՐՅԱ ՈՒՂԵՐՁԸ



### Հարգելի՛ աշխատակիցներ, սիրելի՛ սովորողներ,

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ և Ձեր ընտանիքներին Ամանորի և Սուրբ ծննդյան տոնի առթիվ՝ մաղթելով հաջողություններ ու ամենայն բարիք:

Սրանք տոներ են, որոնք խորհրդանշում են նոր սկիզբ, իսկ քանի որ լավ սկիզբը գործի կեսն է, ուրեմն Ամանորը դիմավորենք

նորոգ հավատով:

Անշուշտ, Ամանորն իր հետ բերում է նոր հույսեր, նոր սպասումներ ու ծրագրեր: Համոզված եմ, որ այդ հույսերի և ծրագրերի իրականացումը մեծ ձեռքբերում է:

Անցնող տարին հազեցած էր բազում նախաձեռնություններով ու իրադարձություններով, ունեցանք զգալի ձեռքբերումներ, որոնցից կարևորագույնն էր Կրթահամալիրի ամբողջ անձնա-

կազմի միասնական աշխատանքի շնորհիվ վաստակած պետական ինստիտուցիոնալ հավատարմագրումը: Այն Կրթահամալիրին հնարավորություն տվեց մուտք գործելու եվրոպական կրթական տարածք: Եղան մաս դեռևս ավարտին չհասած ծրագրեր:

Տարեմուտին վճռականորեն հաստատում ենք, որ ի դեմս ՀՀ ոստիկանության կրթահամալիրի, կայացած, արդիական, ժամանա-

կակից մեթոդներով զինված կրթօջախ ունենալու, օրինապաշտ, հայրենասեր քաղաքացի, ոստիկանության բանիմաց, հմուտ ու անձնագործ աշխատակից կրթելու մեր առաքելության մեջ անհողողոջ ենք: Չկա և չի կարող լինել ոչինչ, որ մեզ կարողանա դուրս-հինչ շեղել այդ պատվաբեր ուղուց:

Առանձնակի հայարտությամբ ուզում եմ բարձրաձայնել կրթահամալիրի արհեստավարժ պրոֆեսորադասախոսական կազմի, հմուտ և հոգատար ուսումնաօժանդակ ծառայությունների աշխատակիցների և ուսումնատեմչ, ազնիվ, բարեխիղճ սովորողների մասին, ովքեր ամենօրյա գործունեությամբ նախորդ տարի բարձրացրել են միմյանց և ողջ Կրթահամալիրի հեղինակությունը:

Սիրելի՛ աշխատակիցներ և սովորողներ, 2020 թվականը թող Ձեզ համար լինի ձեռքբերումների, հաջողության ու համերաշխության տարի, մաղթում եմ, որ 2020 թվականին կյանքի կոչվեն Ձեր բոլոր երազանքները:

Երբեք մի՛ վախեցեք երազելուց, ժպտացե՛ք իրար և մեր օրեցօր ամրացող հայրենիքին, և թող զալիք տարին ժպտի, բարօրության, հաղթանակների, տունդարձի, պարտքի և պարտականության գիտակցման, գիտելիքներով և ուժով

զինվելու, հայրենիքին ու պետականության նվիրումի, սեփական օրինակով զավակների քաջալերման և ծնողների առաջ խոնարհումի տարի լինի:

Նոր տարին առաջին հերթին երեխաների և ընտանեկան տոն է, որ առանձնահատուկ է հատկապես այն օջախներում, որտեղ փոքրիկներ կան: Աշխարհի բոլոր երեխաներին մաղթում եմ առողջություն, ուրախ ու անհոգ մակություն, ընտանեկան ջերմություն ու սեր:

Մեր տարեցներին մաղթում եմ առողջություն և ընտանեկան ջերմություն: Թող նրանք միշտ հնարավորություն ունենան իմաստուն խորհուրդներ տալու իրենց զավակներին ու թոռներին, ուրախանալու ու հպարտանալու նրանց հաջողություններով:

Ավանդույթի համաձայն՝ 31-ի գիշերը մենք բաժակ ենք բարձրացնելու հայրենիքի զինվորների համար, ովքեր այս պահին ցրտաշունչ լեռներում հսկում են սահմանները, պաշտպանում իրենց ու մեր երազանքները, հաղթանակած երկիրն ու ազգային իղծերը:

Մաղթում եմ ամենայն բարիք: Առողջություն ձեզ, ձեր զավակներին ու ձեր ծնողներին:

Շնորհավոր Ամանոր և գալիք Սուրբ ծնունդ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր՝



Սուլշեղ Բաբայան

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐՆ ԱՅՍՈՒՐԵՏ ՊԵՏԻ ՆՈՐ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՈՒՆԻ



ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Միսակ Մերուժանի Մարկոսյանը

նը նույնների 28-ին ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ Արման Սարգսյանի հրամանով նշանակվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալի պաշտոնին:

Նույնների 29-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի նիստերի դահլիճում հրավիրված խորհրդակցության ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Սուլշեղ Բաբայանը ղեկավար կազմին ներկայացրեց կրթահամալիրի պետի նորանշանակ առաջին տեղակալին:

Մ. Բաբայանը բարձր գնահատեց կրթահամալիրի պետի նախկին առաջին տեղակալ և այժմ փոխոստիկանապետ, ոստիկանության գնդապետ Տիգրան Եսայանի կատարած աշխատանքները՝ ընդգծելով, որ նա իր փորձով ու գիտելիքներով մեծ ավանդ է ունեցել կրթահամալիրի զարգացման գործում, այնուհետև հավելեց, որ կրթահամալիրի պետի նորանշանակ առաջին տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանի նշանակումը լավագույն օրինակն է բոլոր սովորողների և աշխատողների համար աշխատանքային ուղին սեփական ուժերով հաղթահարելու և բարձունքներ նվաճելու գործում:

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՋԲԵԿԱՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԳՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

2019թ. դեկտեմբերի 9-ից 14-ը Ուզբեկստանի Հանրապետության ՆԳՆ ակադեմիա էին այցելել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Սուլշեղ Բաբայանը և կրթահամալիրի քոլեջի պետ, ոստիկանության գնդապետ Վարդգես Ներսիսյանը:

Այցի նպատակն էր որակավորված կադրերի պատրաստման գործում Ուզբեկստանի փորձն ուսումնասիրելու հիման վրա մեր հարաբերությունների հետագա զարգացումը, երկու ուսումնական հաստատությունների միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին արձանագրության ստորագրումն ու մասնագիտական ծրագրերի համեմատական վերլուծության իրականացումը:

Այցի ընթացքում հանդիպում տեղի ունեցավ ղեկավար և պրոֆեսորադասախոսական կազմի հետ, քննարկվեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Մասնագիտական կրթական ծրագրերի համեմատական վերլուծության շրջանակներում ուսումնասիրվեցին մի շարք փաստաթղթեր: ► 2



# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐԻ ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԶԲԵԿՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԳՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

1 ◀ Երկու ուսումնական հաստատությունների միջև հանդիսավոր կերպով ստորագրվեց կրթական և գիտական ոլորտում համագործակցության արձանագրություն:

Այցի ավարտին Կրթահամալիրի ներկայացուցիչները ծանոթացան ակադեմիայի գործունեությանը, այցելեցին ակադեմիայի մշակութային կենտրոնները, եղան ակադեմիայի պատմության թանգարանում, հատուկ լսարաններում, տեղեկատվական կենտրոնում և մի շարք այլ ստորաբաժանումներում:



## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ



**ԱՄՆ** դեսպանության աջակցությամբ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների շրջանակում դեկտեմբերի 11-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիր էին այցելել միջազգային փորձագետ Եկատերինա Զգուլաձեն, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության ծրագրի տնօրեն Մայքլ Շուլմանը, ծրագրի իրավապահ գործերով ավագ խորհրդատու Ադի Յոլվեյը, ինչպես նաև ԹՊԻՀ ծրագրի համակարգողներ Մարիցա Յովհաննիսյանն ու Կարինե Քեշաբյանը:

Մ. Մարկոսյանը, Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գևորգյանը, միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գ. Դավթյանը: Հանդիպման ընթացքում Ա. Դուկայանը և Մ. Մարկոսյանը ներկայացրին Կրթահամալիրի կառուցվածքը, իրականացվող կրթական ծրագրերը և զարգացման տեսլականը: Քննարկվեցին երկուստեք հետաքրքրություններ կայացնող բազմաթիվ հարցեր Կրթահամալիրում իրականացվելիք բարեփոխումների ընթացքի և անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ: Այնուհետև հյուրերը հանդիպեցին Կրթահամալիրի մագիստրատուրայի, ակադեմիայի և քոլեջի սովորողների հետ:

## ԱՅՑԵՐ՝ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Դեկտեմբերին տեղի ունեցան երկու միջազգային բնույթի կարևոր այցեր, որոնք կնպաստեն կրթահամալիրում միջազգային ծրագրերի ներդրմանը: 2019թ. դեկտեմբերի 1-ից 13-ը Հատուկ կրթաթոշակով ծրագրի շրջանակներում Կանադայի Մունքի համալսարանից գործերի և հանրային քաղաքականության դպրոցի Համալսարանի արդարադատության ամբիոն էր գործուղվել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի պետ, ոստիկանության կապիտան Գարիկ Խուրդյանը: Ծրագիրը ներառում էր «Համայնքային ոստիկանության ոլորտում ժամանակակից ռազմավարությունների», «ընտանեկան բռնության», «կոռուպցիայի», «քրեական հետաքննությունների ժամանակակից մոտեցումները» (օրինակ՝ տեխնոլոգիական լուծումներ, դատաբժշկական փորձաքննությունները և կատարման միջոցները՝ ներառյալ տվյալները և վահանակները), «ոստիկանության հաշվետվողականությունը, կառավարումն ու հսկողությունը» և այլ բազմաթիվ թեմաներ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են այցեր ոստիկանության համապատասխան ծառայություններ, ոստիկանության քոլեջ, դատա-

րան և այլ վայրեր: Իրականացված այցի արդյունքներով առաջարկություններ կներկայացվեն համապատասխան ստորաբաժանումներին, իսկ ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կօգտագործվեն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական գործընթացում, ինչը կնպաստի ՀՀ ոստիկանության առաջնահերթությունների ամրապնդմանը: Դեկտեմբերի 3-ից 4-ը Հունգարիայի Հանրապետության Բուդապեշտ քաղաքում տեղի ունեցավ Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության փոխանակման ծրագրի ազգային համակարգողների ամենամյա հանդիպումը, որին մասնակցեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ռուսլան Մարանդյանը՝ որպես ազգային համակարգող: Հանդիպման ընթացքում քննարկվել են Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության 2019թ. փոխանակման ծրագրերի կատարումը, ամփոփվել են փոխանակման այցերի արդյունքները: Դեկտեմբերի 2-ին կայացվել են նաև 2020թ. փոխանակման ծրագրերը: **Անի Դուկայան** ոստիկանության ավագ լեյտենանտ

## ԱՄԱՆՈՐՅԱ ՀՐԱՇՔԻՆ ՀԱՎԱՏԱԼ Է ՊԵՏՔ

*Արի՛, Նոր տարի, բայց այնպես արի, որ ատոմական այս ահեղ դարի Գոռ ժամացույցը ինքն իրեն լարի, Արի՛, Նոր տարի, գալուստդ բարի...*

Նոր տարին նշելու սովորույթը գոյություն ունի դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Միջագետքում: Տարին ժամանակի սահմանն է, որը վերցրած է բնությունից: Դա այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում Երկիր մոլորակը կատարում է մի լրիվ պտույտ Արեգակի շուրջ: Երկրի կատարած շրջապտույտը հավասար է 934 միլիոն կիլոմետրի, որն անցնում է մեծ արագությամբ: Տարվա գաղափարն առաջին անգամ ծագել է Եգիպտոսում՝ կապվելով Նեղոս գետի վարարման հետ: Վերջինս համընկնում էր Սիրիոս աստղի երևալուն: Աստղի ու Նեղոսի վարարման միջև ընկած ժամանակաշրջանն էլ կոչվել են տարի: Հայ ժողովուրդն իր պատմության մեջ ունեցել է երեք Նոր տարի՝ Կաղանդ, Նավասարդ և Ամանոր անուններով: Դեռևս վաղնջական ժամանակներում հայերը Նոր տարին ազդարարել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը, որը նաև բնության զարթոնքի խորհրդանիշն էր: Հայոց երկրորդ Նոր տարին նշվում էր Նավասարդի 1-ին (օգոստոսի 11-ին)՝ այն օրը, երբ հայոց հիմնադիր Հայկ Նահապետը հաղթեց Տիտանյան Բելին: Այժմ

աշխարհի երկրների մեծ մասը, այդ թվում նաև Հայաստանը, Ամանորը տոնում է հունվարի 1-ին, որը, ըստ Գրիգորյան օրացույցի, տարվա առաջին օրն է: Հունվարի 1-ը՝ որպես տարվա սկիզբ, սահմանվել է Հռոմի կայսր Յուլիոս Կեսարի կողմից մ.թ.ա. 46 թվականին: Հին Հռոմում այդ օրը նվիրված էր Յանուսին՝ ընտրության, դռների և բոլոր սկիզբների աստծուն: Քրիստոնեական առումով Ամանորը հաշվետվության յուրօրինակ օր է յուրաքանչյուրիս համար, հաշվետվություն, որ տալիս ենք ինքներս մեզ մեր անցած ուղու և կատարած գործերի համար: Ամանորի ամենամեծ նվերը սերն է և հրաշքին հավատալը, այն լի է երազանքներով, բարիքներով և սիրով: Այն սպասված տոն է բոլորիս համար: Ամանոր ասելով պատկերացնում ենք զարդարված տոնածառ, Չմեռ պապ, առատ սեղաններ, մոմեր, լույսեր, հրավառություն, տոնական բարձր տրամադրություն, նվերներ, սեր ու ծայխոներ... Հմուց ի վեր հայերը եղևնու փոխարեն Ամանորին զարդարել են ձիթապտղի կամ խնկի ծառ: Ծառը տարել են եկեղեցի և քահանայի օրհնությունն ստանալուց հետո վերադարձրել տուն: Մրգերով ու չրերով զարդարված Կենաց ծառը եղել է տոնի խորհրդանիշը:



Ամանորի գիշերը երեխաները շրջում էին տներով և տների երդիկից կախում գոտիներից ամրացված իրենց գուլպաները, որպեսզի տնեցիները քաղցրեղենով լցնեին դրանք: Եվրոպայում ծառ և եղևնի զարդարել են միայն 16-րդ դարից: Տոնածառը ծագումով «գերմանուհի» է: Այն համարվում էր սուրբ ծառ և խորհրդանշում է անմահությունը, հավատարմությունը, երկարակեցությունը, արժանապատվությունը: Մերօրյա տոնածառը կապում են գերմանական ռեֆորմացիայի առաջնորդ Մարտին Լյութերի անվան հետ: Մի գիշեր հոգնած տուն գնալիս Լյութերը նստում է ճամփեզրին՝ մի փոքր համգստանալու: Ճանապարհը զարդարված էր եղևնիներով



# ԱՐԴԵՆ ՄԱԳԻՍՏՐՈՍ




**Յ**ոստիկանության կրթահամալիրում դեկտեմբերի 5-ին իրարանցում էր. լսարանի առաջ իրենց հանդիսավոր եզրափակիչ պաշտպանությանն էին անհամբեր սպասում ապագա մագիստրոսները, անց էր կացվում 33 ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը և նախորդ ուստարվա շրջանավարտների վերատեստավորումը: Ամփոփիչ պետական ատեստավորման և նախորդ ուստարվա շրջանավարտների վերատեստավորման հանձնաժողովի նախագահն էր 33 ոստիկանության շտաբի պետ, ոստիկանության գնդապետ Ա.Ղուկասյանը:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցում էր 24 շրջանավարտ, որոնցից 23-ը հաջողությամբ անցան ամփոփիչ ատեստավորումը, իսկ մեկ շրջանավարտ անբավարար ստացավ: Չորս շրջանավարտ արժանացավ գերազանցության դիպլոմի:

33 ոստիկանության կրթահամալիրի ղեկավարությունն ու անձնակազմն ի սրտե շնորհավորում է մագիստրոսական կոչում ստացած սովորողներին՝ մաղթելով կրթական ու գիտական նորանոր բարձունքների հաղթահարում, հաջողություններ ու համարձակ ձեռնարկումներ՝ ի նպաստ հասարակության և ի շահ մեր պետության:

## ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ «ԵՐԱԶԱՆԵՑԻ ԹԵՎԵՐՈՎ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ



Լույս է տեսել «Երազանքի թևերով» ստեղծագործությունների ժողովածուն, որը ներկայացնում է 33 ոստիկանության կրթահամալիրի սովորողների և ծառայողների վերջին շրջանի ստեղծագործությունները: Ժողովածուում տեղ են գտել նաև ստեղծագործությունների թեմատիկայով արված գեղանկարներ, որոնց հեղինակները ևս կրթահամալիրի սովորողներն են:

Յուրաքանչյուր ստեղծագործություն հեղինակի մտքի բյուրեղացումն է, նրա հոգու կարոտի հևը, երազանքի թռիչքը: Ժողովածուն շնչում է հայրենասիրությամբ ու մարդասիրությամբ, բնապաշտությամբ և ամբիժ ու անապակ սիրով: Նրանում քիչ չեն նաև խոհափիլիսոփայական մտորումները, ժամանակակից մարդու հուզաշխարհն ու երևակայությունը բացահայտող տողերը:

Հարգելի՛ ընթերցող, հուսանք, որ ժողովածուում գետեղված ստեղծագործություններն իրենց պատկերավոր մտածողությամբ, ներքին երաժշտականությամբ տպավորություն կթողնեն ձեզ վրա և մտորելու տեղիք կտան:

րով, որոնց ճյուղերի արանքից առկայծում էին փայլուն աստղերը: Տպավորված նրանց գեղեցկությամբ՝ Մարտին Լյուբերն իր տանը զարդարում է առաջին եղևնին: Ռուսաստանում տանը տոնածառ դնելու ավանդույթն սկիզբ է առել 17-րդ դարում Պետրոս I-ի օրոք: Ամանորն անհնար է պատկերացնել առանց հրաշագործ Ձմեռ պապի: Հայերս ունեցել ենք ձմեռային հրաշագործ՝ Մեծ պապուկ կամ Կաղանդ պապա: Նա առնչվում էր կաթոդիկոս Սահակ Պարթևի անվան հետ, ով, համաձայն ավանդության, հայտնվում էր գավազանով և ոչխարի մորթուց պատրաստված քուրթով: Ձմեռ պապը (արևմուտքում ասում են Սանտա Կլաուս) իրականում հոգևորական է եղել: Նա Ս. Նիկողայոս Հայրապետն էր: Ժամանակին հույն Նիկողայոս հայրապետը շրջում էր տնետուն և չքավոր ընտանիքների պատուհաններին գունար կամ նվերներ դնում: Ձմեռ պապի կերպարը ծագել է հենց այստեղից: «Սանտա Կլաուս» թարգմանաբար ս. Նիկողայոս է նշանակում: Այնպես որ, Ձմեռ պապի նվերները մեր մանուկներն ընդունում են որպես պարզ և ստույգ:

Ամանորյա սեղանը շքեղություն է խորհրդանշում, և այն պետք է լինի առատ՝ առնվազն յոթ կերակրատեսակով: Ավանդական ուտեստները պատրաստվում էին հատիկեղենից, որի պատիճը խորհրդանշում էր ընտանիքի ամրությունը, իսկ հատիկը՝ ընտանիքի սաղմը:

Ամանորի տոնակատարություններին հա-

ճախ օգտագործվում են բենգալյան կրակներ, հրավառություններ, մոմեր և այլն: Ամանորը ծայրերով ու աղմուկով դիմավորելու ավանդույթը տարբեր երկրներում գոյություն է ունեցել դեռևս հազարամյակներ առաջ: Ամեն ինչ սկսվել է այն լեգենդից, որի համաձայն Ամանորի նախօրյակին չար ոգիները, որոնց վշտով են աշխարհի տարբեր ծայրերից, իրենց համար նոր ապաստան են փնտրել: Գտնելով իրենց համար հարմար տուն՝ նրանք ամբողջ տարի ապրել են այդ տանը և տանտերերին տարբեր անհաջողություններ են բերել: Այդ իսկ պատճառով Ամանորը դիմավորելիս պետք է մեծ աղմուկ հանել, որպեսզի չար ոգիները վախենան և հեռանան:

Հին տարին կավարտվի ու կմնա անցյալում, իսկ նորը, նոր թափ առած, կսկսի իր ճանապարհը՝ որպես նոր կյանքի սկիզբ: Թող Ամանորի հրաշքը չլինի վերացական և անհաս, այլ թող այն լինենք մենք՝ ինքներս մեզ, մեր ընտանիքի, մեր քաղաքի ու մեր երկրի համար: Եկեք ցանկանանք, որ 2020 թվականը բոլորիս համար լինի հաջողությունների, հաղթանակների, նոր նվաճումների տարի, Հայաստան աշխարհը պատերազմից զերծ, հաշտ ու խաղաղ կյանքով հարատև արարի, թող ամենուր արդարություն տիրի, և մարդիկ լինեն երջանիկ:

Շնորհավո՛ր բոլոր հրաշքների գալիք Նոր տարին:

**Լիանա Խրշոյան**  
ոստիկանության լեյտենանտ

# ՊԱՏԻՎ ՈՒՆԵՍ



Նպատակը կյանքի շարժիչ ուժերից մեկն է: Այն չի կարող լինել անփոփոխ, որովհետև աշխարհը փոփոխվում է շեշտակի արագությամբ, ու մարդկանց առաջ բոլորովին նոր հրամայականներ և մարտահրավերներ են հայտնվում: Բայց որպեսզի աշխարհին քանու կողմից քշվող դեղնահար ու դողոջ տերևի պես շարունակ մի նպատակից մյուսը չքշվեն և առաջ ընթանա, պետք է ունենա հիմնական, գերազույն նպատակ: Եվ ահա այդ միակ նպատակն ունենալու համար անհրաժեշտ է նախ և առաջ փորձել ինքը քեզ, ճանաչել ինքը քեզ, հասկանալ, թե իրականում դու ինչի ես ընդունակ, որոնք են քո ուժերը և թույլ կողմերը, առավել անհատականացնող գծերը, ինչով էլ դու տարբերվում ես մնացածներից:

Երբեմն մարդկանց իրենց երազանքների ճանապարհից հետ է պահում հասարակական կարծիքը: Խոստովանեն, որ գուցե ժամանակին հասարակական կարծիքն ինձ հետ պահեի ոստիկան դառնալու իմ նպատակից, եթե չունենայի պատշաճ սկզբունքայնություն, մինչև վերջ գնալու և պայքարելու անկողորմ կամք: Իմ շրջապատում (իսկ իմ շրջապատը մեծ է) քիչ չեն այն երիտասարդները, որոնք, ավարտելով ծառայությունը, որոշում են դառնալ ոստիկան՝ լավ հասկանալով մասնագիտության ռոմանտիկան և պահանջված լինելը, սակայն ոմանք հենց հասարակական կարծիքի պատճառով հետ են կանգնում երբեմնի փայփայած երազանքներից: Ես չդավաճանեցի ինքս ինձ, գնացի հատկապես ավագ եղբորս հետքերով և այժմ այստեղ եմ իմ շատ սիրելի 33 ոստիկանության կրթահամալիրում: Ազնվորեն խոստովանեն,

որ մի տեսակ երանություն եմ ապրում այն մտքից, որ մի քանի տարի հետո կավարտեմ կրթահամալիրը, կստանամ լեյտենանտի կոչում և մասնագիտական գիտելիքներով ու հմտություններով զինված՝ ձեռնամուխ կլինեն հայրենիքիս պաշտպանության, ծաղկման ու զարգացման սուրբ գործին: Այդ ժամանակ ես ինձ բացարձակ երջանիկ կզգամ, քանի որ միայն սիրելի գործով զբաղվելն է հնարավորություն տալիս մարդուն հասնել երջանկության և նվաճումների, իսկ երջանկությունը յուրաքանչյուրիս համար ամենակարևորն է:

Մարկ Տվենն ասել է. «Նա, ով չգիտի, թե ուր է գնում, շատ կգարմանա՝ հայտնվելով այլ տեղ»:

Պատիվ ունեն ասելու, որ ես գտել եմ իմ տեղն այս կյանքում, ասել է թե՛ ես գտել եմ ինքս ինձ:

**Նորայր Հովասափյան**  
ոստիկանության սերժանտ,  
իրավագիտության 1-ին կուրս,  
1-ին դասակ

## ԴԵՊԵԻ ՎԱՅՐԸ ԶՆՆՈՒՄ ԵՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ



Դեպքի վայր, հանցագործություն, նախաքննություն. այս անգամ դասը գործնական բնույթ էր կրում: 33 ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ՕԶԳ և քրեագիտության ամբիոնի կրիմինալիստիկական լաբորատորիայում անցկացվեց կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ու քրեական դատավարության ամբիոններին կից գործող գիտական խմբակի 2019-2020 ուսումնական տարվա երրորդ միստը՝ քննության պլանի կազմումը դեպքի վայրի զննության արդյունքներով խորագրով մրցախաղ:

Մրցախաղն անցկացվեց կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման 4-րդ կուրսերի սովորողների միջև: Մասնակիցները մեծ ակտիվությամբ ձեռնամուխ եղան իրենց հանձնարարա-

կանների կատարմանը, ցուցաբերեցին ինքնուրույն աշխատելու ունակություններ:

Պահանջն հստակ էր. կարճ ժամանակահատվածում կատարել դեպքի վայրի զննություն: Խնդիրներ դրվեցին

**Դեպքի (եղելիության) բնույթի պարզում,**  
**Դեպքի (եղելիության) տեղի, ժամանակի, եղանակի և այլ հանգանակների պարզում,**  
**Այն հետքերի ուսումնասիրումը, որոնք կարող են թողնված լինել հանցագործի, տուժողի և վկանների կողմից,**  
**Բացառող (ժխտական) հանգանակների պարզում:**

Համապատասխան նյութերի ու տեխնիկական միջոցների գործադրմամբ իրականացրեցին հետքերի հայտնաբերման, ամրագրման և վերցնելու գործընթացը: 4

